

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՈՒ ՀԵՌՈՒՄՏԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԿԱՊ ՍԵՂՇԵՆՈՒ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության և Սիրիայի Արաբական Հանրապետության միջև փոստային կապի և կապի այլ միջոցների ամրապնդման, զարգացման նպատակով Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս կապի նախարար պարոն Գրիգոր Պողոսյանի, և Սիրիայի Արաբական Հանրապետության կապի նախարարությունը՝ ի դեմս կապի նախարար պարոն Մուհամեդ Ռադուան Մարտինիի, համաձայնեցին հետևյալի մասին.

Ա. ՓՈՍՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կողմերի միջև ստեղծել ուղղակի փոստի փոխանակում, համաձայն Համաշխարհային փոստային միության Կոնվենցիայի (Վաշինգտոն 1989թ.), և ձեռնարկել անհրաժեշտ քայլեր փոստային առաքումների և փոստային փոխանակման համար՝ համաձայն փոստային առաքումների վերաբերյալ ՀՓՄ համաձայնագրերի:

2. Փոստային փոխադրումներ կատարել անմիջապես Հալեպ-Երևան, Երևան-Հալեպ ճանապարհով: Մինչև այդ ձևի կիրառումը սիրիական կողմը ձեպագրեր կուղարկի Հայաստան Դամասկոս-Մոսկվա-Երևան գծով:

3. Կողմերը պարտավորվում են Համաձայնագիրն ստորագրելուց հետո հնարավորին չափ շուտ ներկայացնել առաջարկություններ փոստային փոխադրումների տարբեր ձևերի համաձայնագրերի վերաբերյալ:

4. Կողմերը պարտավորվում են օգտագործել իրենց հնարավորությունները տարանցիկ փոստափոխանակում կազմակերպելու համար:

5. Կողմերը համաձայնեցին միմյանց աջակցել միջազգային կազմակերպություններում և կոնֆերանսներում:

6. Կողմերը համաձայնեցին կազմակերպել մասնագետների փոխադարձաբար ուսուցում, փորձի փոխանակում և տարբեր մակարդակների փոխայցելություններ:

Բ. ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կողմերը համաձայնեցին հնարավորինս կարճ ժամկետում հեռախոսային և հեռագրային անմիջական ցանց ստեղծել երկու երկրների միջև՝ օգտագործելով գոյություն ունեցող արբանյակային կապի հնարավորությունները, կամ որոնք գոյություն կունենան ապագայում:

2. Մինչև անմիջական կապի միջոցների ստեղծումը երկու կողմերը համաձայնում են օգտագործել գործող միջանկյալ միջազգային հեռահաղորդակցության միջոցները:

3. Կողմերը համաձայնեցին միմյանց աջակցել միջազգային կազմակերպություններում և կոնֆերանսներում:

4. Կողմերը համաձայնեցին, երկու բարեկամ ժողովուրդների շահերից ելնելով, փոխհաշվարկային սակագները ընդունել ըստ գործող միջազգային նորմատիվների՝ ջանալով նվազեցնել դրանք:

5. Կազմակերպել տեխնիկական տեղեկությունների փոխանակում, մասնագետների ուսուցում, փորձի փոխանակում և տարբեր մակարդակների փոխայցելությունների իրականացում:

Համաձայնագիրը կազմված է երկու բնօրինակով, երեք լեզուներով՝ հայերեն, արաբերեն և անգլերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են: Տարածայնությունների դեպքում անգլերեն տեքստը կգերակայի:

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ստորագրված է Դամասկոս քաղաքում 1994 թվականի ապրիլի 4-ին: Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1994 թվականի ապրիլի 4-ից: